



2 (157). ՊՈՒՊՈՒ

Հեքիաթ կրսե, թե՛ շատ ու շատ չառեջ, եբ մարդիկ արդար են, ընոնց չրմեն ըսած կէղներ. մոր մե տղեմ կէղնի—անպետք ու կըղտոտ, տարին տըսվերկու ամիս չը վաքվեր, չը լողկներ, օրնիբուն կը զվոներ մըջ գեղին:

Մեր կըսե.

— Արի՛ վաքվի:

— Չէ՛, չըմ չուզի՛,— կըսե տղեն, ու մամուց կը փախնի հեռուն:

— Կղտոտն իկա՛վ, պլնջոտն էկա՛վ,— ձեն կիտեն էրեխեք. հմա ընոր ի՛նչ, դընցներ, կէրթեր, մարդու չըր լսի:

Օրեր գընցնին. մեր կը տեսնա, օր տղեն կըղտի մեջ կը փըտի, դելնա դօջախ կը վառե, պղնձով ջուր կը դնե վըր կրակին, կը բերն փետե մեծ տաշտ, օր տղին լողկըցու:

— Չէ՛, չըմ չուզի,— կըսե, ու մամուց կը փախնի հեռուն:

Ոն սաբը էն՛:՝ մեր սաբը չէնե, կը վազե, պինդ կը ընե տղին, կը քաշե, կը բերե, շորեր կը հանե, կը դնե մըջ տաշտին, ջուր կը լցե գլխուն, կը վերցու սանդր, օր սանդրե, իգա գահ տղեն մոր ձեռքեն կը փըստա, կը փախնի:

Խեղճ մեր դառն ու դարտակ կիշկե ընոր շետեից, կը կանչե, գիլա, ուր շոքեր կը ծեծե, կը տեսնա, օր ճար չկա, կանիծե. օր կանիծե, տղեն սանդր գլխին, աստծու հրամանքով կը դառնա թռչուն, կը կանչե.

— Պո՛ւ-պո՛ւ, պո՛ւ-պո՛ւ:

Աշխըրքի չրմեն թռչնոց մեջ չըմնուց կղտոտ պուպուն է. մարդ չուզե մոտենա ընոր, չունքի հըմալ հոտ գիկա, օր մարդու գլխու մաղեր կը թափի հոտուց...

Հըմալ չառեջ էկավ պուպուն:

